# ;ՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՏՊԱԳՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
# N ՀՀԱՆ-ԳՀԱՇՁԲ-17/1

**ք. Երևան** **«27» նոյեմբերի 2017թ.**

**Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության աշխատակազմն** ի դեմս աշխատակազմի ղեկավար **Նունե Խաչատրյանի**, որը գործում է Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության աշխատակազմի կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, **Ա/Ձ Իրինա Մելքոնյանն, ի դեմս Իրինա Մելքոնյանի** (այսուհետև՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

**1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ**

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է **տպագրական աշխատանքների** կատարման պարտավորությունը (այսուհետ՝ աշխատանք)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Աշխատանքը կատարվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

**2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

**2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝**

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից կատարվող աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե կատարվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող աշխատանք.

ա) Չընդունել աշխատանքը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի աշխատանքը պայմանագրին համապատասխանող աշխատանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու աշխատանքի համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) կատարված աշխատանքը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է աշխատանքի կատարման ժամկետը:

**2.2 Պատվիրատուն պարտավոր է՝**

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան կատարված աշխատանքի արդյունքը, իսկ աշխատանքի արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.3 Կատարողն իրավունք ունի՝**

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.4 Կատարողը պարտավոր է՝**

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել աշխատանքի կատարումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

## 3. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (**հավելված N 3.1**), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (**հավելված N 3**): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված **10** աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և սույն պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

## 4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1.Պայմանագրով Կատարողի կատարման ենթակա աշխատանքի գինը կազմում է **3392508 (երեք միլիոն երեք հարյուր իննսուներկու հազար հինգ հարյուր ութ ) ՀՀ դրամ**, ներառյալ ԱԱՀ-ն[1]:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Աշխատանքի կատարման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն կատարված աշխատանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (**հավելված N 2**) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը:

## 5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում աշխատանքի կատարման՝ սույն պայմանագրի պահանջների պահպանման համար:

---

[1] *Եթե Կատարողի կողմից գնային առաջարկը ներկայացվել է առանց ԱԱՀ-ի, ապա պայմանագիրը կնքելիս «ներառյալ ԱԱՀ-ն» բառերը հանվում են:*

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող աշխատանք կատարելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով[2]:

5.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են աշխատանքը կատարելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

## 6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված Համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու-հանգամանքը[3]:

7.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

---

[2] *Պայմանագիրը «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա կնքված լինելու դեպքում տուգանքը հաշվարկվում է պայմանագրի գնի այն մասի նկատմամբ, որի համար տվյալ տարվա ընթացքում հատկացվել են ֆինանսական միջոցներ և կնքվել է համաձայնագիր:*

[3] *Պետական բյուջեի միջոցների հաշվին պարտավորություններ չառաջացնող գնումների դեպքում սույն նախադասությունը պայմանագրից հանվում է:*

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.10 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Պայմանագիրը կազմված է **4 (չորս)** էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

## 8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՏԱՐՈՂ |
|---|---|
| ՀՀ արդարադատության նախարարության աշխատակազմ | Ա/Ձ Իրինա Մելքոնյան |
|Ք. Երևան, Վ.Սարգսյան 3/8 | Հասցե՝ ք. Երևան, Շեդևրի 47, բն 28 |
| ՀՀ ֆինանսների նախարարության գործառնական վարչություն | «Ինեկոնսալտ» ՍՊԸ |
| Հ/Հ 900011194215 | Հ/Հ 900012210164101 |
| ՀՎՀՀ 02506264 | ՀՎՀՀ 02523869 |
| (ստորագրություն) Կ.Տ. | (ստորագրություն) |

**Հավելված N 1**
**«27» նոյեմբերի 2017թ. կնքված**
**ՀՀԱՆ-ԳՀԱՇՁԲ-17/1 ծածկագրով պայմանագրի**

## ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Աշխատանքի | | | | | | | Կատարման | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | տեխնիկական բնութագիրը | չափման միավորը | միավոր գինը/ՀՀ դրամ | ընդհանուր գինը/ՀՀ դրամ | ընդհանուր քանակը | հասցեն | ժամկետը** |
| 1 | 22451180/45 | ՔԿԱԳ-ի դիմումների հաշվառման մատյան:<br>**Չափը՝** -21սմx30սմ<br>**Կազմը՝**-երկկողմանի, կոշտ ստվարաթուղթ՝ դիմերեսին 1 գույնի (սև) տպագրությամբ, ստվարաթղթի քաշը՝ առնվազն 600գ/մ², կազմը երկկողմանի ամբողջությամբ բուվելինապատ<br>**Կազմելու եղանակը՝**- թելակար, լրացուցիչ տելակար՝ էջերի քանակը ֆիքսելու համար:<br>**Միջուկը՝**- թուղթ օֆսեթ-80գ/մ², թղթի սպիտակությունը՝ առնվազն 155% (ըստ CIE համակարգի, առանց շեղումների)<br>**Միջուկի Տպագրությունը՝**- երկկողմանի, 1 գույնով՝ սև, օֆսեթ եղանակով<br>**Թերթերի քանակը՝** 100 թերթ | **հատ** | 980 | **58800** | **60** | Ք.Երևան, Վ.Սարգսյան 3/8 | Պայմանագրի կնքման օրվանից մինչև պայմանագրի կնքմանը հաջորդող 10-րդ աշխատանքային օր, բայց ոչ ոշ քան՝ 20.12.2017թ. |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| 2 | 22451180/46 | ՔԿԱԳ-ի ծննդյան դիմումների հաշվառման մատյան:<br>**Չափը՝** -21սմx30սմ<br>**Կազմը՝**-երկկողմանի, կոշտ ստվարաթուղթ՝ դիմերեսին 1 գույնի (սև) տպագրությամբ, ստվարաթղթի քաշը՝ առնվազն 600գ/մ², կազմը երկկողմանի ամբողջությամբ բուվելինապատ<br>**Կազմելու եղանակը՝**- թելակար, լրացուցիչ տելակար՝ էջերի քանակը ֆիքսելու համար:<br>**Միջուկը՝**- թուղթ օֆսեթ-80գ/մ², թղթի սպիտակությունը՝ առնվազն 155% (ըստ CIE համակարգի, առանց շեղումների)<br>**Միջուկի Տպագրությունը՝**- երկկողմանի, 1 գույնով՝ սև, օֆսեթ եղանակով<br>**Թերթերի քանակը՝** 100 թերթ | **հատ** | 980 | **51940** | **53** | Ք.Երևան, Վ.Սարգսյան 3/8 | Պայմանագրի կնքման օրվանից մինչև պայմանագրի կնքմանը հաջորդող 10-րդ աշխատանքային օր, բայց ոչ ոշ քան՝ 20.12.2017թ. |
| 3 | 22451180/47 | ՔԿԱԳ-ի վկայականների ելքի հաշվառման մատյան:<br>**Չափը՝** -21սմx30սմ<br>**Կազմը՝**-երկկողմանի, կոշտ ստվարաթուղթ՝ դիմերեսին 1 գույնի (սև) տպագրությամբ, ստվարաթղթի քաշը՝ առնվազն 600գ/մ², կազմը երկկողմանի ամբողջությամբ բուվելինապատ<br>**Կազմելու եղանակը՝**- թելակար, լրացուցիչ տելակար՝ էջերի քանակը ֆիքսելու համար:<br>**Միջուկը՝**- թուղթ օֆսեթ-80գ/մ², թղթի սպիտակությունը՝ առնվազն 155% (ըստ CIE համակարգի, առանց շեղումների)<br>**Միջուկի Տպագրությունը՝**- երկկողմանի, 1 գույնով՝ սև, օֆսեթ եղանակով<br>**Թերթերի քանակը՝** 100 թերթ | **հատ** | 980 | **51940** | **53** | Ք.Երևան, Վ.Սարգսյան 3/8 | Պայմանագրի կնքման օրվանից մինչև պայմանագրի կնքմանը հաջորդող 10-րդ աշխատանքային օր, բայց ոչ ոշ քան՝ 20.12.2017թ. |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| 4 | 22451180/48 | ՔԿԱԳ-ի տեղեկանքների վերաբերյալ դիմումների հաշվառման մատյան:<br>**Չափը՝** -21սմx30սմ<br>**Կազմը՝**-երկկողմանի, կոշտ ստվարաթուղթ՝ դիմերեսին 1 գույնի (սև) տպագրությամբ, ստվարաթղթի քաշը՝ առնվազն 600գ/մ², կազմը երկկողմանի ամբողջությամբ բուվելինապատ<br>**Կազմելու եղանակը՝**- թելակար, լրացուցիչ տելակար՝ էջերի քանակը ֆիքսելու համար:<br>**Միջուկը՝**- թուղթ օֆսեթ-80գ/մ², թղթի սպիտակությունը՝ առնվազն 155% (ըստ CIE համակարգի, առանց շեղումների)<br>**Միջուկի Տպագրությունը՝**- երկկողմանի, 1 գույնով՝ սև, օֆսեթ եղանակով<br>**Թերթերի քանակը՝** 100 թերթ | **հատ** | 980 | 58800 | **60** | Ք.Երևան, Վ.Սարգսյան 3/8 | Պայմանագրի կնքման օրվանից մինչև պայմանագրի կնքմանը հաջորդող 10-րդ աշխատանքային օր, բայց ոչ ոշ քան՝ 20.12.2017թ. |
| 5 | 22451180/49 | Դիմում /հայտարարություն Չև 3:<br>**Չափը՝** -21սմx29.7սմ<br>**Տպագրությունը՝**- միաղմանի, 1 գույնով, օֆսեթ եղանակով<br>**Թուղթը՝**- թուղթ օֆսեթ-80գ/մ², թղթի սպիտակությունը՝ առնվազն 155% (ըստ CIE համակարգի) | **հատ** | 6 | 6000 | **1000** | Ք.Երևան, Վ.Սարգսյան 3/8 | Պայմանագրի կնքման օրվանից մինչև պայմանագրի կնքմանը հաջորդող 10-րդ աշխատանքային օր, բայց ոչ ոշ քան՝ 20.12.2017թ. |
| 6 | 22451180/50 | Դիմում /հայտարարություն Չև 4<br>**Չափը՝** -21սմx29.7սմ<br>**Տպագրությունը՝**- միաղմանի, 1 գույնով, օֆսեթ եղանակով<br>**Թուղթը՝**- թուղթ օֆսեթ-80գ/մ², թղթի սպիտակությունը՝ առնվազն 155% (ըստ CIE համակարգի) | **հատ** | 6 | 6000 | **1000** | Ք.Երևան, Վ.Սարգսյան 3/8 | Պայմանագրի կնքման օրվանից մինչև պայմանագրի կնքմանը հաջորդող 10-րդ աշխատանքային օր, բայց ոչ ոշ քան՝ 20.12.2017թ. |
| 7 | 22451180/51 | Ծրարներ գաղտնի նամակագրության համար նախատեսված, դեմերեսին՝ միակողմանի միագույն տպագրությամբ տպագրված անհրաժեշտ տեքստ՝ ըստ պատվիրատուի ներկայացման, պատրաստված 130գ/մ² խտությամբ կրավթ թղթից, եռանկյունաձև փակվող, չափսերը՝ 175x250մմ: | **հատ** | 100 | 20000 | **200** | Ք.Երևան, Վ.Սարգսյան 3/8 | Պայմանագրի կնքման օրվանից մինչև պայմանագրի կնքմանը հաջորդող 10-րդ աշխատանքային օր, բայց ոչ ոշ քան՝ 20.12.2017թ. |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| 8 | 22451180/52 | Ծրարներ գաղտնի նամակագրության համար նախատեսված, դեմերեսին՝ միակողմանի միագույն տպագրությամբ տպագրված անհրաժեշտ տեքստ՝ ըստ պատվիրատուի ներկայացման, պատրաստված 130գ/մ² խտությամբ կրավթ թղթից, եռանկյունաձև փակվող, չափերը՝ 235x310մմ: | **հատ** | 150 | **30000** | **200** | Ք.Երևան, Վ.Սարգսյան 3/8 | Պայմանագրի կնքման օրվանից մինչև պայմանագրի կնքմանը հաջորդող 10-րդ աշխատանքային օր, բայց ոչ ոշ քան՝ 20.12.2017թ. |
| 9 | 22451180/53 | Ծրարներ գաղտնի նամակագրության համար նախատեսված, դեմերեսին՝ միակողմանի միագույն տպագրությամբ տպագրված անհրաժեշտ տեքստ՝ ըստ պատվիրատուի ներկայացման, պատրաստված 130գ/մ² խտությամբ կրավթ թղթից, եռանկյունաձև փակվող, չափերը՝ 270x380մմ: | **հատ** | 200 | **10000** | **50** | Ք.Երևան, Վ.Սարգսյան 3/8 | Պայմանագրի կնքման օրվանից մինչև պայմանագրի կնքմանը հաջորդող 10-րդ աշխատանքային օր, բայց ոչ ոշ քան՝ 20.12.2017թ. |
| 10 | 22451180/54 | Ինքնակենսագրություն(գաղտնի) **Չափը՝** -21սմx29.7սմ **Տպագրությունը՝**- երկկողմանի, 1 գույնով՝ սև, օֆսեթ եղանակով, տպագրվող նյութը՝ ըստ պատվիրատուի ներկայացման, **Թուղթը՝**- թուղթ օֆսեթ-80գ/մ², թղթի սպիտակությունը՝ առնվազն 155% (ըստ CIE համակարգի) | **հատ** | 20 | **4000** | **200** | Ք.Երևան, Վ.Սարգսյան 3/8 | Պայմանագրի կնքման օրվանից մինչև պայմանագրի կնքմանը հաջորդող 10-րդ աշխատանքային օր, բայց ոչ ոշ քան՝ 20.12.2017թ. |
| 11 | 22451180/55 | Հարցաթերթ /2 թերթ/ (գաղտնի) **Չափը՝** -29.7սմx42սմ **Տպագրությունը՝**- երկկողմանի, 1 գույնով՝ սև, օֆսեթ եղանակով, տպագրվող նյութը՝ ըստ պատվիրատուի ներկայացման, **Թուղթը՝**- թուղթ օֆսեթ-80գ/մ², թղթի սպիտակությունը՝ առնվազն 155% (ըստ CIE համակարգի) | **հատ** | 35 | **7000** | **200** | Ք.Երևան, Վ.Սարգսյան 3/8 | Պայմանագրի կնքման օրվանից մինչև պայմանագրի կնքմանը հաջորդող 10-րդ աշխատանքային օր, բայց ոչ ոշ քան՝ 20.12.2017թ. |
| 12 | 22451180/56 | Քարտ ըստ երրորդ ձևի թույլտվության/ գաղտնի/ ձև 4 **Չափը՝** -14.8սմx21սմ **Տպագրությունը՝**- երկկողմանի, 1 գույնով՝ սև, օֆսեթ եղանակով, տպագրվող նյութը՝ ըստ պատվիրատուի ներկայացման, **Թուղթը՝**- թուղթ ֆութբորդ սպիտակ-450գ/մ² | **հատ** | 45 | **13500** | **300** | Ք.Երևան, Վ.Սարգսյան 3/8 | Պայմանագրի կնքման օրվանից մինչև պայմանագրի կնքմանը հաջորդող 10-րդ աշխատանքային օր, բայց ոչ ոշ քան՝ 20.12.2017թ. |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| 13 | 22451180/57 | Նախարարի ձևաթուղթ /անգլերեն/ **Չափը՝** -21սմx29.7սմ **Տպագրությունը՝**- միակողմանի, գունավոր՝ առնվազն 4 գույն, օֆսեթ եղանակով, Տպագրվող նյութը՝ ըստ պատվիրատուի ներկայացման, **Թուղթը՝**-կարող է պարունակել (ըստ պատվիրատուի պահանջի) պաշտպանիչ մանրաթելեր, որոնցից մի մասը /կամ բոլորը/ կարող են տեսանելի լինել միայն ուլտրամանուշակագույն լույսի ներքո: Թուղթը՝ ոչ կավճապատ, օֆսեթ-110գ/մ$^2$ խտությամբ, թղթի սպիտակությունը՝ առնվազն 155% (ըստ CIE համակարգի) **Պաշտպանիչ դիզայնը** պետք է լինի պատվիրատուի կողմից տրամադրված օրինակելի ձևին և սույն տեխնիկական բնութագրին համապատասխան: Պարունակի բազմագույն և բազմատեսակ տպագրական եղանակներ ներառող բաղադրիչներ: Պաշտպանիչ դիզայնը պետք է ընդգրկի ձևաթղթի ամբողջ մակերեսը՝ կառուցված անհատական տպագրական ցանց՝ գունային փոփոխություններով և գելեոշիրային յուրատեսակ էլեմենտների նմանեցված տեսքով տպագրության հիման վրա: Պաշտպանիչ դիզայնը կարող է պարունակել տեքստ և/կամ միկրոտեքստ՝ ըստ պատվիրատուի պահանջի: | **հատ** | 29 | **87000** | **3000** | Ք.Երևան, Վ.Սարգսյան 3/8 | Պայմանագրի կնքման օրվանից մինչև պայմանագրի կնքմանը հաջորդող 10-րդ աշխատանքային օր, բայց ոչ ոշ քան՝ 20.12.2017թ. |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| 14 | 22451180/58 | Նախարարի ձևաթուղթ /ռուսերեն/ **Չափը՝** -21սմx29.7սմ **Տպագրությունը՝**- միակողմանի, գունավոր՝ առնվազն 4 գույն, օֆսեթ եղանակով, Տպագրվող նյութը՝ ըստ պատվիրատուի ներկայացման, **Թուղթը՝**-կարող է պարունակել (ըստ պատվիրատուի պահանջի) պաշտպանիչ մանրաթելեր, որոնցից մի մասը /կամ բոլորը/ կարող են տեսանելի լինել միայն ուլտրամանուշակագույն լույսի ներքո: Թուղթը՝ ոչ կավճապատ, օֆսեթ-110գ/մ$^2$ խտությամբ, թղթի սպիտակությունը՝ առնվազն 155% (ըստ CIE համակարգի) **Պաշտպանիչ դիզայնը** պետք է լինի պատվիրատուի կողմից տրամադրված օրինակելի ձևին և սույն տեխնիկական բնութագրին համապատասխան: Պարունակի բազմագույն և բազմատեսակ տպագրական եղանակներ ներառող բաղադրիչներ: Պաշտպանիչ դիզայնը պետք է ընդգրկի ձևաթղթի ամբողջ մակերեսը՝ կառուցված անհատական տպագրական ցանց՝ գունային փոփոխություններով և գելեոշիրային յուրատեսակ էլեմենտների նմանեցված տեսքով տպագրության հիման վրա: Պաշտպանիչ դիզայնը կարող է պարունակել տեքստ և/կամ միկրոտեքստ՝ ըստ պատվիրատուի պահանջի: | **հատ** | 29 | **87000** | **3000** | Ք.Երևան, Վ.Սարգսյան 3/8 | Պայմանագրի կնքման օրվանից մինչև պայմանագրի կնքմանը հաջորդող 10-րդ աշխատանքային օր, բայց ոչ ոչ քան՝ 20.12.2017թ. |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| 15 | 22451180/63 | Նախարարության աշխատակազմի ձևաթուղթ: **Չափսը՝** -21սմx29.7սմ **Տպագրությունը՝**- միակողմանի, գունավոր՝ առնվազն 4 գույն, օֆսեթ եղանակով, Տպագրվող նյութը՝ ըստ պատվիրատուի ներկայացման, **Թուղթը՝**-կարող է պարունակել (ըստ պատվիրատուի պահանջի) պաշտպանիչ մանրաթելեր, որոնցից մի մասը /կամ բոլորը/ կարող են տեսանելի լինել միայն ուլտրամանուշակագույն լույսի ներքո: Թուղթը՝ ոչ կավճապատ, օֆսեթ-110գ/մ$^2$ խտությամբ, թղթի սպիտակությունը՝ առնվազն 155% (ըստ CIE համակարգի) **Պաշտպանիչ դիզայնը** պետք է լինի պատվիրատուի կողմից տրամադրված օրինակելի ձևին և սույն տեխնիկական բնութագրին համապատասխան: Պարունակի բազմագույն և բազմատեսակ տպագրական եղանակներ ներառող բաղադրիչներ: Պաշտպանիչ դիզայնը պետք է ընդգրկի ձևաթղթի ամբողջ մակերեսը՝ կառուցված անհատական տպագրական ցանց՝ գունային փոփոխություններով և գելեոշիրային յուրատեսակ էլեմենտների նմանեցված տեսքով տպագրության հիման վրա: Պաշտպանիչ դիզայնը կարող է պարունակել տեքստ և/կամ միկրոտեքստ՝ ըստ պատվիրատուի պահանջի: | **հատ** | 29 | **106807** | **3683** |Ք.Երևան, Վ.Սարգսյան 3/8 | Պայմանագրի կնքման օրվանից մինչև պայմանագրի կնքմանը հաջորդող 10-րդ աշխատանքային օր, բայց ոչ ոշ քան՝ 20.12.2017թ. |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| 16 | 22451180/59 | Նախարարության թղթապանակ Թղթապանակ թղթյա, թուղթը՝ սադաֆ(գույնը՝ ըստ պատվիրատուի համաձայնության) 450 գ/մ² խտությամբ, առանց կարելու կամ կապելու հնարավորության: Թղթապանակի դիմերեսին ոսկեգույնով կամ արծաթագույնով (ըստ պատվիրատուի պահանջի) դաջված տեքստ և ՀՀ զինանշան (տպագրված տարբեր խմբաքանակներով՝ ըստ տեքստի բովանդակության՝ ըստ պատվիրատուի ներկայացրած պահանջի): Տեքստը՝ ըստ պատվիրատուի ներկայացման: Մեջտեղից ծալվող: Թղթապանակի չափսերը փակ վիճակում՝ 22,5x31,0սմ: Թղթապանակի ներսի կողմի ստորին աջ անկյունում թղթե գրպանիկ(պատրաստված նույն թղթապանակի թղթից)՝ երկկողմ փակ: Գրպանիկի չափսերը՝ 10սմx21սմ՝ հորիզոնական: Թղթապանակը երկողմ ամբողջությամբ լամինացված: | հատ | 295 | 1180000 | 4000 | Ք.Երևան, Վ.Սարգսյան 3/8 | Պայմանագրի կնքման օրվանից մինչև պայմանագրի կնքմանը հաջորդող 10-րդ աշխատանքային օր, բայց ոչ ոշ քան՝ 20.12.2017թ. |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| 17 | 22451180/60 | Նախարարի տեղակալների ձևաթուղթ<br>**Չափը**՝ -21սմx29.7սմ<br>**Տպագրությունը**՝- միակողմանի, գունավոր՝ առնվազն 4 գույն, օֆսեթ եղանակով, Տպագրվող նյութը՝ ըստ պատվիրատուի ներկայացման,<br>**Թուղթը**՝-կարող է պարունակել (ըստ պատվիրատուի պահանջի) պաշտպանիչ մանրաթելեր, որոնցից մի մասը /կամ բոլորը/ կարող են տեսանելի լինել միայն ուլտրամանուշակագույն լույսի ներքո: Թուղթը՝ ոչ կավճապատ, օֆսեթ-110գ/մ$^2$ խտությամբ, թղթի սպիտակությունը՝ առնվազն 155% (ըստ CIE համակարգի)<br>**Պաշտպանիչ դիզայնը** պետք է լինի պատվիրատուի կողմից տրամադրված օրինակելի ձևին և սույն տեխնիկական բնութագրին համապատասխան: Պարունակի բազմագույն և բազմատեսակ տպագրական եղանակներ ներառող բաղադրիչներ: Պաշտպանիչ դիզայնը պետք է ընդգրկի ձևաթղթի ամբողջ մակերեսը՝ կառուցված անհատական տպագրական ցանց՝ գունային փոփոխություններով և գելեոշիրային յուրատեսակ էլեմենտների նմանեցված տեսքով տպագրության հիման վրա: Պաշտպանիչ դիզայնը կարող է պարունակել տեքստ և/կամ միկրոտեքստ՝ ըստ պատվիրատուի պահանջի: | **հատ** | 29 | **108721** | **3749** | Ք.Երևան, Վ.Սարգսյան 3/8 | Պայմանագրի կնքման օրվանից մինչև պայմանագրի կնքմանը հաջորդող 10-րդ աշխատանքային օր, բայց ոչ ոշ քան՝ 20.12.2017թ. |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| 18 | 22451180/61 | Հաշվառման քարտ<br>**Չափսը՝** -10.5սմx15սմ<br>**Տպագրությունը՝**- երկկողմանի, 1 գույնով՝ սև, օֆսեթ եղանակով, տպագրվող նյութը՝ ըստ պատվիրատուի ներկայացման,<br>**Թուղթը՝**- թուղթ ֆութբորդ սպիտակ՝ -450գ/մ2 խտությամբ, թղթի սպիտակությունը՝ առնվազն 155% (ըստ CIE համակարգի) | **հատ** | 10 | **30000** | **3000** |Ք.Երևան, Վ.Սարգսյան 3/8 | Պայմանագրի կնքման օրվանից մինչև պայմանագրի կնքմանը հաջորդող 10-րդ աշխատանքային օր, բայց ոչ ոշ քան՝ 20.12.2017թ. |
| 19 | 22451180/62 | Անձնական գործ՝ թղթյա: Կազմը՝ ֆութբորդ սպիտակ՝ 450-600 գ/մ² խտությամբ, առանց կարելու կամ կապելու հնարավորության: Կազմը և միջուկի թերթերը երկկողմ տպագրված (տպագրված տարբեր խմբաքանակներով՝ ըստ տեքստի բովանդակության՝ ըստ պատվիրատուի ներկայացրած պահանջի): Մեջտեղից ծալված և կարված: Միջուկի և կազմի չափսերը միմյանց հավասար: Չափսերը՝ բացված վիճակում՝ 43.0x30.5սմ միջուկի թերթերը՝ 120 գ/մ2 խտությամբ օֆսեթային, կարիչով կարված, թերթերի արանքում (մեկումեջ) ունի 40 մմ լայնությամբ բուվելինե շերտեր՝ թվով 4 հատ, միջուկի թերթերի քանակը՝ 4 թերթ: Տեքստը՝ ըստ պատվիրատուի ներկայացման: Միջուկի թղթի սպիտակությունը՝ առնվազն 155% (CIE համակարգով): | **հատ** | 295 | **1475000** | **5000** |Ք.Երևան, Վ.Սարգսյան 3/8 | Պայմանագրի կնքման օրվանից մինչև պայմանագրի կնքմանը հաջորդող 10-րդ աշխատանքային օր, բայց ոչ ոշ քան՝ 20.12.2017թ. |

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

**ՀՀ արդարադատության նախարարության աշխատակազմ**
**Ք. Երևան, Վ.Սարգսյան 3/8**
**ՀՀ ֆինանսների նախարարության գործառնական վարչություն**
**ՀՎՀՀ 90001194215**
**ԱՀՀ 02506864**

(ստորագրություն)

**ԿԱՏԱՐՈՂ**

**Ա/Ձ Իրինա Մելքոնյան**
**Հասցե՝ ք. Երևան, [illegible] 47, բն 28**
**«Ինեկոբանկ» ՓԲԸ**
**Հ/Հ՝ [illegible]3210164100**
**ՀՎՀՀ [illegible]3869**

(ստորագրություն)

**Հավելված N 2**
**«27» նոյեմբերի 2017թ. կնքված**
**ՀՀԱՆ-ԳՀԱՇՁԲ-17/1 ծածկագրով պայմանագրի**

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | Աշխատանքի դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2017թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում** | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը |
| 1 | 22451180/45 | 1 ՔԿԱԳ-ի դիմումների հաշվառման մատյան | - | - | - | - | - | - | - | - | - | - | - | 58800 | 58800 |
| 2 | 22451180/46 | 2 ՔԿԱԳ-ի ծննդյան դիմումների հաշվառման մատյան | - | - | - | - | - | - | - | - | - | - | - | 51940 | 51940 |
| 3 | 22451180/47 | 3 ՔԿԱԳ-ի վկայականների ելքի հաշվառման մատյան | - | - | - | - | - | - | - | - | - | - | - | 51940 | 51940 |
| 4 | 22451180/48 | 4 ՔԿԱԳ-ի տեղեկանքների վերաբերյալ դիմումների հաշվառման մատյան | - | - | - | - | - | - | - | - | - | - | - | 58800 | 58800 |
| 5 | 22451180/49 | 5 Դիմում /հայտարարություն Ձև 3 | - | - | - | - | - | - | - | - | - | - | - | 6000 | 6000 |
| 6 | 22451180/50 | 6 Դիմում /հայտարարություն Ձև 4 | - | - | - | - | - | - | - | - | - | - | - | 6000 | 6000 |

| | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 7 | 22451180/51 | 7 Ծրարներ փոքր(գաղտնի) | - | - | - | - | - | - | - | - | - | - | - | 20000 | 20000 |
| 8 | 22451180/52 | 8 Ծրարներ միջին(գաղտնի) | - | - | - | - | - | - | - | - | - | - | - | 30000 | 30000 |
| 9 | 22451180/53 | 9 Ծրարներ մեծ(գաղտնի) | - | - | - | - | - | - | - | - | - | - | - | 10000 | 10000 |
| 10 | 22451180/54 | 10 Ինքնակենսագրություն (գաղտնի) | - | - | - | - | - | - | - | - | - | - | - | 4000 | 4000 |
| 11 | 22451180/55 | 11 Հարցաթերթ /2 թերթ/ (գաղտնի) | - | - | - | - | - | - | - | - | - | - | - | 7000 | 7000 |
| 12 | 22451180/56 | 12 Քարտ ըստ երրորդ ձևի թույլտվության/ գաղտնի/ ձև 4 | - | - | - | - | - | - | - | - | - | - | - | 13500 | 13500 |
| 13 | 22451180/57 | 13 Նախարարի ձևաթուղթ /անգլերեն/ | - | - | - | - | - | - | - | - | - | - | - | 87000 | 87000 |
| 14 | 22451180/58 | 14 Նախարարի ձևաթուղթ /ռուսերեն/ | - | - | - | - | - | - | - | - | - | - | - | 87000 | 87000 |
| 15 | 22451180/63 | 15 Նախարարության աշխատակազմի ձևաթուղթ | - | - | - | - | - | - | - | - | - | - | - | 106807 | 106807 |
| 16 | 22451180/59 | 16 Նախարարության թղթապանակ | - | - | - | - | - | - | - | - | - | - | - | 1180000 | 1180000 |
| 17 | 22451180/60 | 17 Նախարարի տեղակալների ձևաթուղթ | - | - | - | - | - | - | - | - | - | - | - | 108721 | 108721 |
| 18 | 22451180/61 | 18 Հաշվառման քարտ | - | - | - | - | - | - | - | - | - | - | - | 30000 | 30000 |
| 19 | 22451180/62 | 19 Անձնական գործ | - | - | - | - | - | - | - | - | - | - | - | 1475000 | 1475000 |

| | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| **Ընդամենը՝** | - | - | - | - | - | - | - | - | - | - | - | 3392508 | 3392508 |

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ արդարադատության նախարարության
աշխատակազմ
Քաղ. Երևան, Վ.Սարգսյան 3/8
ՀՀ ֆինանսների նախարարության
գործառնական գանձարան
հ/հ 90001119421 5
ՀՎՀՀ 02506264

տարածքային գանձապետ՝ Ս.

ԿԱՏԱՐՈՂ
Ա/Ձ Իրինա Մելքոնյան
Հասցե՝ ք. Երևան, Շերամի 47, բն 28
«Ինեկոնսալտինգ ՍՊԸ»
հ/հ 20500520010410001
ՀՎՀՀ 32523869

ԱՆՀԱՏԱԿԱՆ ԱՆՁՆԱԳԻՐ
IRINA MELKONYAN
32523869

**Հավելված N 3**
**«27» նոյեմբերի 2017թ. կնքված**
**ՀՀԱՆ-ԳՀԱՇՁԲ-17/1 ծածկագրով պայմանագրի**

Պայմանագրի կողմ
_____
_____
գտնվելու վայրը _____
հհ _____
_____
հվհհ _____

Պատվիրատու
_____
_____
գտնվելու վայրը _____
հհ_____
_____
հվհհ_____

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
## ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

*«  » «  » 20  թ.*

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝ _____
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն՝ ի դեմս _____ և
Պայմանագրի կողմը՝ ի դեմս_____, հիմք ընդունելով Պայմանագրի կատարման վերաբերյալ «____» «_____» 20 թ. կազմված՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի N եզրակացությունն այն մասին, որ Պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված աշխատանքները համապատասխանում են Պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը կատարել է հետևյալ աշխատանքները՝

| N | Կատարված աշխատանքի | | | | | | Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/ | Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/ |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | անվանումը | տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը | քանակական ցուցանիշը | | կատարման ժամկետը | | | |
| | | | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | | |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |

Վերոհիշյալ աշխատանքների կատարման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Աշխատանքը հանձնեց

_____
ստորագրություն

_____
ազգանուն, անուն

Կ.Տ.

Աշխատանքն ընդունեց

_____
ստորագրություն

_____
ազգանուն, անուն

Կ.Տ.

**Հավելված N 3.1**
**«27» նոյեմբերի 2017թ. կնքված**
**ՀՀԱՆ-ԳՀԱՇՁԲ-17/1 ծածկագրով պայմանագրի**

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը
(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված աշխատանքները.

| Աշխատանքի | | |
|---|---|---|
| անվանումը | չափման միավորը | քանակը (փաստացի) |
| | | |
| | | |

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

**Հանձնեց**

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

**Ընդունեց**
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

ՏՈՒԺԱՆՔԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N **ՀՀԱՆ-ԳՀԱՇՁԲ-17/1**
(պայմանագրի կատարման ապահովում)

ք. Երևան **<< 27 >> նոյեմբերի 2017թ.**

**Ա/Ձ Իրինա Մելքոնյանն, ի դեմս Իրինա Մելքոնյանի**, (այսուհետև՝ Ընկերություն), սույնով միակողմանի սահմանում է հետևյալ տուժանքի վճարման համաձայնությունը.

## 1. ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ

Ընկերությունը մասնակցում է **ՀՀ արդարադատության նախարարության աշխատակազմի** (այսուհետ՝ Պատվիրատու) կողմից կազմակերպված՝ <**տպագրական աշխատանքների**>* ձեռքբերման <**ՀՀԱՆ-ԳՀԱՇՁԲ-17/1**>* ծածկագրով ԳՀ** գնման ընթացակարգին:

1.1 Որպես գնման ընթացակարգի արդյունքում կնքվելիք պայմանագրի կատարման ապահովում, Ընկերությունը Պատվիրատուին է ներկայացնում սույն տուժանքի համաձայնագիրը և կից վճարման պահանջագիրը՝ լրացված և հաստատված Ընկերության կողմից՝ համաձայն ՀՀ կենտրոնական բանկի հաստատած՝ <<Վճարահաշվարկային գործառնությունների կատարման ժամանակ կիրառվող փաստաթղթերի նվազագույն վավերապայմանների և դրանց լրացման կանոնների>>:

1.2 Ընկերության կողմից գնման ընթացակարգի արդյունքում կնքված պայմանագիրը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում Պատվիրատուն սույն տուժանքի համաձայնագիրը և կից վճարման պահանջագիրը (այսուհետ՝ պայմանագրի կատարման ապահովման վճարման պահանջագիր) ներկայացնում է Ընկերությանը սպասարկող բանկին (այսուհետ՝ Բանկ)՝ այդ մասին գրավոր տեղեկացնելով Ընկերությանը:

1.3 Բանկը պայմանագրի կատարման ապահովման վճարման պահանջագիրը ընդունում է կատարման՝ Պատվիրատուի կողմից սույն տուժանքի համաձայնագրի և գնման ընթացակարգի արդյունքում կնքված պայմանագրի չկատարման կամ ոչ պատշաճ կատարման փաստը հաստատող փաստաթղթի բնօրինակները, որոնք նշվում են պայմանագրի կատարման ապահովման վճարման պահանջագրում, Բանկին տրամադրվելու դեպքում:

1.4 Պայմանագրի կատարման ապահովման վճարման պահանջագրում նշված գումարի վճարման հետևանքով առաջացած ռիսկերի (Ընկերության կրած վնասների) համար Բանկը պատասխանատվություն չի կրում:

1.5 Սույն համաձայնագիրը և կից պայմանագրի կատարման ապահովման վճարման պահանջագիրը Բանկ ներկայացնելուց հետո, Բանկից անկախ պատճառներով, տասն աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուին գումարը չվճարվելու դեպքում, Պատվիրատուն չվճարման հետ կապված Ընկերության մասին տեղեկությունները փոխանցում է <<ԱՔՌԱ Քրեդիթ Ռեփորթինգ>> ՓԲԸ (Վարկային բյուրո):

## 2. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

2.1 Սույն համաձայնագիրը ուժի մեջ է մտնում Ընկերության կողմից վավերացման պահից և գործում է մինչև Ընկերության կողմից կնքված պայմանագրով նախատեսված պարտավորությունների ամբողջ ծավալով կատարումը:

2.2 Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

**3. Ընկերության հասցեն, բանկային վավերապայմանները՝**

Ընկերության անվանումը՝ **Ա/Ձ Իրինա Մելքոնյան**
Հասցեն՝ **ՀՀ, [illegible], Շերամի 47, բն 28**
Սպասարկող բանկի անվանումը **«Ինեկոբանկ» ՓԲԸ**
Հ/Հ 20[illegible]3210164100[illegible]
ՀՎՀՀ [illegible]23869141313
տնօ[illegible] (ստորագրություն)
գլխ. հաշվապահ [illegible] (ստորագրություն)
Կ.Տ

ԱՌԱՋԻՆ ԳՐԱՍԵՆՅԱԿ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՎԱԾ ԱՌԱՆՁՆԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
FIRST PRIVATE ENTERPRISE OF ARMENIA
ԻՐԻՆԱ ՄԵԼՔՈՆՅԱՆ
IRINA MELKONYAN
02523869

1. **ՎՃԱՐՄԱՆ ՊԱՀԱՆՋԱԳԻՐ[4] N ՀՀԱՆ-ԳՀԱՇՁԲ-17/1**
*(պայմանագրի կապարման ապահովում)*

2. Ներկայացման ամսաթիվը՝ "___" _____ 2017թ.

3. Ընկերություն (այսուհետ՝ վճարող)՝ **Ա/Ձ Իրինա Մելքոնյան**

4. Վճարողի բանկը՝ **«Ինեկոբանկ» ՓԲԸ**

5. Վճարողի հաշվի համարը՝ **2050932101641001**

6. Վճարողի ՀՎՀՀ՝ **32523869**

7. Վճարողի ՀՁՀ՝

8. Շահառու՝ **ՀՀ արդարադատության նախարարության աշխատակազմ**

9. Շահառուի ՀՎՀՀ՝ **02506264**

10. Շահառուի բանկը՝ **Կենտրոնական գանձապետարան**

11. Շահառուի հաշվի համարը /հշ.N/ **900005000758**

12. Գումարը թվերով և բառերով՝ **339250 (երեք հարյուր երեսունինը հազար երկու հարյուր հիսուն)**

13. Արժույթը (բառերով և կոդով)՝ **ՀՀ դրամ**

14. Գործարքի /վճարման/ նպատակը՝ թիվ **ՀՀԱՆ-ԳՀԱՇՁԲ-17/1 պայմանագրի ապահովում**

15. Պայմանագրի ծածկագիրը՝ **ՀՀԱՆ-ԳՀԱՇՁԲ-17/1**

16. Փաստաթղթերի անվանումը, դրանց համարները, տրամադրման պայմանը 17. կից՝--- էջ

| | |
|---|---|
| 19.ա. Շահառուի ստորագրությունները՝ /_____/ /_____/ | 18.ա. Ստորագրությունները՝ /_____/ /_____/ |
| 19.բ. Կ.S. | 18.բ. Կ.S. |
| Կատարված է շահառուի բանկի կողմից | Կատարված է վճարողի բանկի կողմից |
| 20.ա. /_____/ /ստորագրություն/ | 21.ա. /_____/ /ստորագրություն/ |
| 20.բ. Կ.S. "___" ___ 20___ թ. | 21.բ. Կ.S. 22. Կատարման ամսաթիվը՝ "___" ___ 20___ թ. |

[4] *Վճարման պահանջագիրը լրացվում է համաձայն սույն հրավերով սահմանված «Վճարման պահանջագրի պարտադիր վավերապայմանների և լրացման կարգի»:*